

ՀԱՐԱՆՈՒՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒԹ

Բանասիր. գիտ. դոկտոր Ա. Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Դեռևս V դարում՝ հույն քերական Դիոնիսոս Թրակացու «Քերականական արվեստ» („Τέχνη γραμματική“) աշխատության հայերեն թարգմանության մեջ առաջին անգամ գործ է ածվել հարանուն (<յարանուն) անվանումը՝ հունարենի παρώνυμον (= παρα· «հար, կից» + ονομα «անուն») բառի ուղղակի պատճենմամբ: Այնտեղ «Յաղագս անուան» բաժնում անվան երկու տեսակ է նշվում. «և տեսակք են երկուք, նախագաղափար և ածանցական. եւ է նախագաղափարն, որ ըստ առաջին գաղափարին կոչեցաւ, հիբար երկիր եւ ածանցական, որ յայլմէ զսեռութիւնն ընկալաւ, որպիսի երկրային: Եւ տեսակք են ածանցական] -ացն եւթն. հայրանուանական, ստացական, բաղդատական, գերադրական, փաղաբշական, լարանուն (ընդգծումն իմն է—Ա. Մ.), բայածական»¹:

Այսպիսով՝ հույն քերականի պատկերմամբ հարանունը ածանցման մի տեսակ է, որի դեպքում նույն ածանցի հարակցմամբ ձևով նման բառեր են կազմվում. «Յարանուն է որ յար յանուն քերդոցեալ է, որպիսի տիրինա՞ն, խրախնան»²: Ըստ որում, ինչպես նաև բերված օրինակներն են ցույց տալիս, ոչ թե բոլոր, այլ հնչմամբ իրար մոտ բառեր կազմող ածանցներն են հարանուն կոչվում: Նույնն է հաստատում Գ. Ավետիքյանը, գրելով. «Յարանուն կըսէ հին քերականը այն մասնիկն՝ որ կը ցուցանէ մէկ յարում մը. հավէս մը ան բանին որ նախատիպը կը նշանակէ, որ ետքը ըսվեցաւ յարողական և զեղծական. և ասոնք են հաւն (գինեճան, դաւաճան, տիրաճան, խրախճան), ձէտ կամ ժոտ (ախտաժէտ, խելաժէտ, նենգաժէտ կամ նենգաժոտ, որկրաժէտ), շոտ (լեզուաշոտ, պագշոտ)»³:

Բայց հարանունը այլ կերպ են ըմբռնել ու մեկնաբանել Դիոնիսոս Թրակացու քերականության հայ մեկնիչները. Դավիթը, Անանուն Մեկնիչը, Մովսես Քերդողը՝ անվան նույնպես երկու տեսակ (նախագաղափար և ածանցական) ընդունելով և հարանունը նույնպես ածանցման տեսակ համարելով՝ անտեսել են բառերի նմանահնչունության (СОЗВУЧІЕ) հանգամանքը և հարցը «քննել», եթե կարելի է ասել, վերացականի ու թանձրացականի, ընդհանուրի ու մասնավորի փոխհարաբերության տեսակետից: Հմմտ. «Յարանուն է, յառաքինութենէ առաքինի և ի խրախամտութենէ՝ խրախճան» (Դավիթ), «Վեցերորդ տեսակ ածանցանցն է յարանունաբար, որպիսի ի տիրութենէ տիրիճան և զխրախճանութիւնն ճանաչելով՝ խրախճան» (Անանուն Մեկնիչ), «Յարա-

¹ Н. Адонц, Диониси Фракийский и армянские толкователи, СПб., 1913, էջ 13:

² Նույն տեղում, էջ 15—16:

³ Գ. Ավետիքյան, Քերականութիւն հայկական, Վենետիկ, 1815, էջ 235:

⁴ Տե՛ս Գ. Զահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջին դարերի Հայաստանում, Երևան, 1954, էջ 121—169:

նուն է յիշխանությունն է՝ իշխան, յաջողությունն է՝ աջող, ի զօրությունն է՝ զօրաւոր, ի մեծությունն է՝ մեծ» (Մովսէս Քերդող)՝:

Այս ըմբռնումն էլ, սակայն, հետազայում ըստ էության տարածում չի գտնում: Ստ. Սյունեցու մեկնության մեջ յաւանդունք պարպապես հիշատակվում է որպէս ածանցման մի տեսակ, իսկ Համամ իերեկցու «Վերլուծութիւն քերականին» երկում բացառվում է ամբողջապես:

Իրանից հետո մինչև մեր օրերը հայ լեզվաբանական գրականության մեջ հարանունը չի ճանաչվել իբրև լեզվական իրողություն և բնականաբար նաև ուսումնասիրության-հետազոտության նյութ չի դարձել: Բոլոր դեպքերում այն համարվել է անցյալին վերաբերող երևույթ և նոր հայկապյան բառարանի բացատրությամբ նշանակել է 1. «Ճարակից ընդ այլ անուն՝ իբր՝ բարդեալ կամ ածանցեալ քերականօրէն ի նոյն անուանէ», 2. «Տեսակ ածանցանցն», 3. «Ըստ տրամաբանից նմանաւոր անուն ենթակայի ունակութեան կամ որակութեան իրիւ» և 4. «Անուն յար և նման կամ յարմար իրին»⁵:

Եվ ոչ պատահականորեն ժամանակակից հայերենի բառարաններում հաւանում (<յարանուն)-ը և նրանից բաղադրված՝ հաւանումաբար (<յարանունաբար), հաւանումակի (<յարանունակի), հաւանումապես (<յարանունապէս), հաւանումություն (<յարանունություն)... բառերը դիտվում են իբրև հնացած, գործածությունից դուրս մղված բառեր⁷: Բայց այստեղ իսկ հարկ է նշել, որ այն, ինչ մեզանում հնացած կամ գուցե և ավելորդ, մերժելի է համարվել, ուրիշների կողմից ճանաչվում ու ներկայացվում է իբրև լեզվական, մանավանդ գործնական մեծ կարևորություն ունեցող երևույթ⁸: Ինչպէս իմանալ, որ հարանուններն, օրինակ, հատկապես վերջին երկու տասնամյակում հատուկ քննության նյութ են դարձել: Նրանք ոչ միայն իրենց բնութագիրն են ստացել հանրագիտարաններում⁹, լեզվաբանական բառարաններում¹⁰, ուսումնական ձեռնարկներում¹¹, այլև շատ ու շատ կողմերով լուսաբանվել են մեծ ու փոքր ծավալի մի շարք հոդվածներում և ուսումնասիրություններում¹²: Հարանունների մասին գրվել են առանձին աշխատություն-

⁵ Н. Адоиц. *нзվ. աշխ.*, էջ 106, 142, 171.

⁶ Տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հատ. II, Վենետիկ, 1837, էջ 345: Ի դեպ, Առձեռն բառարանն էլ երէք իմաստ է նշում. «1. մէկ բանէն առած անուն:-2. գոյականէն անուն առած ածականը:-3. բանին յարմար անուն» (տե՛ս 2-րդ տպագրութիւնը, Վենետիկ, 1865, էջ 588), որից երևում է, որ բառարանագիրներն անգամ միատեսակ չեն բացատրել հարանունը:

⁷ Տե՛ս, օրինակ, Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հատ. III, Երևան, 1944, էջ 397, «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հատ. III, Երևան, 1974, էջ 319:

⁸ ՄԼԻ օրերում հայերենի հարանունների մասին առաջինը խոսք է բացել Վ. Բաղդասարյանը, 1977 թ. ապրիլից «Գրքերի աշխարհում» տպագրելով մի հոդվածաշար, որ, անշուշտ, ուղղորդված է արժանի:

⁹ Տե՛ս, օրինակ, «Большая советская энциклопедия», т. 19, М., 1975, էջ 667:

¹⁰ Տե՛ս, օրինակ, О. С. Ахманова, Словарь лингвистических терминов, М., 1969, էջ 313:

¹¹ Տե՛ս М. Н. Фомина, Лексика современного русского языка, М., 1973, էջ 63—66: Д. Н. Шмелев, Современный русский язык, М., 1977, էջ 231—232:

¹² Տե՛ս О. В. Вишнякова, К вопросу о паронимах («Русский язык в школе», 1964, № 3); և ուրիշ՝ Паронимы в русском языке, М., 1974; և ուրիշ՝ О проблемах паронимии (ВЯ, 1978, № 4, էջ 96—106): Н. П. Колесников, Паронимия в современном русском языке («Русский язык в школе», 1961, № 3) և այլն:

ներ¹³, ինչպես նաև որոշակի քայլեր են արվել համապատասխան բառարաններ ստեղծելու ուղղությամբ¹⁴:

Բայց, այսուհանդերձ, ինչպես հենց իրենք սուս լեզվաբաններն են վկայում, ոչ միայն «հարանունության երևույթն է տակավին անբավարար լուսաբանված գրականության մեջ», այլև մի միասնական տեսակետ կամ հայացք չի մշակված նրա վերաբերյալ, և հրապարակի վրա խիստ իշխող են իրարամերձ ու հակասական կարծիքները¹⁵:

Ամենից առաջ՝ ի՞նչ է հարանունը իբրև այդպիսին: Ռուս լեզվաբանները դա տարբեր կերպ են ըմբռնում ու բացատրում. ոմանք (Օ. Վ. Վիշնյակովա, Ի. Ի. Ֆոմինա) հարանուն են կոչում հնչմամբ (արտաքին հնչյունական կազմով) իրար մոտ միայն համարմամբ՝ նույն արմատից կազմված բառերը, որոնցից մեկը կարող է սխալմամբ զործածվել մյուսի փոխարեն (օրինակ՝ остаток—останки, абонент—абонement, дипломат—дипломант...), իսկ ոմանք (Ն. Պ. Կուենիկով, Ա. Ա. Եվգրաֆովա) հարանուն են կոչում «ընդհանրապես հնչմամբ մոտ բոլոր բառերը»¹⁶ (օրինակ՝ апеллировать—оперировать, заведовать—завидовать): Այդ պատճառով, հասկանալի է, հարանունների որոշման համար նրանք նույնպես տարատեսակ չափանիշներ են առաջադրում, հարանունները բնութագրում ոչ ճիշտ միատեսակ հատկանիշներով, ինչպես նաև նշում զանազան տարբերություններ մի կողմից՝ հարանունների և մյուս կողմից՝ համանունների (նույնանունների), հոմանիշների (համանիշների, նույնանիշների), հականիշների միջև:

Նման տարբերումներն ու տարակարծությունները (որ, անշուշտ, անխուսափելի արդյունքն են երևույթի դեռևս ոչ բավարար ուսումնասիրության) մի կողմ թողնելով, նախ՝ այն հարցն ենք ուզում առաջ քաշած լինել. թե հարանուններն, իբրև լեզվական իրակություն, որչափ են հատուկ հայերենին, որի վաղ շրջանի քերականություններում դեռևս, ինչպես տեսանք, հաճախում հասկացություն-անվանումն է զործածվել, և ապա՝ ուզում ենք պարզած լինել, թե հարանունների և դրանց ամբողջ համակարգի՝ հարանունության, ուսումնասիրությունը, որքանով է անհրաժեշտ և ունի՞ արդյոք տեսական ու դործնական նշանակություն, թե՞ ոչ: Պատասխանելու համար այդ հարցերին, պետք է ամենից առաջ որոշել, թե ի՞նչ և ինչպիսի՞ հատկանիշներով ու առանձնահատկություններով է բնորոշվում հարանունն իբրև լեզվական երևույթ: Հարանունը, անշուշտ, մեկն է լեզվական այն իրողություններից, որոնց բնույթն ու էությունը որոշվում է բառի՝ իբրև լեզվի հիմնական իմաստային միավորի, ձևի՝ արտաքին հնչյունական կազմի, և բովանդակության՝ ներքին իմաստային կողմի, կապով ու հարաբերությամբ: Այդ տեսակետից էլ բառերը, ինչպես հայտնի է, լինում են համաճյուղներ կամ նույնաճյուղներ (омо-

¹³ Տե՛ս А. П. Критенко, Паронимия и ее роль в русском языке (автореф. канд. дисс.), Киев, 1974; А. А. Евграфова, Паронимия в современном русском языке (автореф. канд. дисс.), Киев, 1975.

¹⁴ Տե՛ս Ю. А. Бельчикова и М. С. Панюшева, Трудные случаи употребления однокоренных слов русского языка, М., 1968; Н. П. Колесников, Словарь паронимов русского языка, Тбилиси, 1971.

¹⁵ Տե՛ս, օրինակ, А. А. Евграфова, նշվ. աշխ., էջ 3; О. В. Вишнякова, О проблемах паронимии (ВЯ, 1978, № 4, էջ 98):

¹⁶ Տե՛ս, օրինակ, Д. Н. Шмелев, նշվ. աշխ., էջ 231:

нимы), հոմանիշներ (синонимы), հակահիշներ (антонимы) և հաբանուններ (паронимы), որոնք, սակայն, մեզանում դեռևս ճանաչում չեն գտել և, բնականաբար, չեն ներկայացվել նրանց հետ՝ մի ընդհանուր շարքում: Ըստ որում, եթե համանունները (նույնանունները) ձևով նույն, այսինքն՝ նույն հնչյունական կազմն ունեցող, իսկ իմաստով տարբեր, այսինքն՝ այլ իմաստ արտահայտող բառերն են (հմտ. օրինակ՝ այլ «տղամարդ»—այլ «քարանձավ», կույս «կողմ»—կույս «աղջիկ», իրմն «հիմք»—հիմն «҃҃҃҃» են), եթե հոմանիշները (ներառյալ նաև նույնանիշները) ձևով տարբեր, այսինքն՝ այլ հնչյունական կազմ ունեցող, իսկ իմաստով նույն կամ մոտ, այսինքն՝ միատեսակ կամ իրար շատ մոտ իմաստ արտահայտող բառերն են (հմտ. օրինակ՝ պատուհան—լուսամուտ, գնալ—երթալ, ձի—նժույգ—երիվար, նորից—դարձալ—կրկին—էլի—վերստին, մտածել—խորհել—խորհրդածել—խոկալ—մտորել—միտք անել են), եթե հակահիշները նույնպես ձևով տարբեր, բայց հակադիր իմաստ արտահայտող բառերն են (հմտ. օրինակ՝ գիշեր—ցերեկ, մեծ—փոքր, շատ—քիչ, աջ—ձախ, լույս—խավար, բերել—տանել, իջնել—բարձրանալ, ներս—դուրս են)¹⁷, ապա հարանունները իրենց արտաբերին հնչյունական կազմով կամ ձևով իրար բավական նման կամ խստորեն մոտ, իսկ իմաստով սերտ հարաբերակից բառերն են, ինչպես, օրինակ՝ արհեստ—արվեստ, բաժանում—բաժանմունք, գործոն—գործուն, գործունություն—գործունություն, դասել—դարսել, երկարյա—երկարե, զգալություն—զգալունություն, խաբեություն—խաբեություն, կտրիկ—կտրիչ, համարել—համրել, վերաբերել—վերաբերվել, ցուցում—ցուցմունք, տեղի տալ—տեղիք տալ և այլն, և այլն:

Բերված օրինակներից ևս կարելի է նկատել, որ հարանունները իրենց արտաբերին հնչյունական կազմով կամ ընդհանուր ձևաբանական կառուցվածքով և ներքին՝ իմաստային-բովանդակային կողմով մի տեսակ համանունների (նույնանունների) և հոմանիշների (ներառյալ նույնանիշները) միջին տեղն են բռնում: Ըստ որում, մի դեպքում, այսինքն՝ ձևով նրանք հարում են համանուններին (հմտ. կազմակերպական—կազմակերպական, հրատարակություն—հրատարակչություն, հարդարել—զարդարել, հոգի—ոգի են), իսկ մյուս դեպքում, այսինքն՝ իմաստով կամ բովանդակությամբ՝ հոմանիշներին:

Տարբեր կողմերով հարելով համանուններին և հոմանիշներին, հարանունները, հասկանալի է, ոչ թե նույնանում, այլ որոշակիորեն տարբերվում ու առանձնանում են ինչպես մեկից, այնպես էլ մյուսից: Համանունների դեպքում համադրվող բառերը, իբրև կանոն, ձևով բացարձակապես համընկնում են արտաբույստ լիովին նմանվում են իրար, հմտ. բալ («բալենու պտուղը») — բալ («մեզ, մառախուղ»), զագ («ֆիզիկական մարմին») — զագ («բույսի տեսակ»), զագ («երկարություն չափ») — զագ («մետաքսյա գործվածք»), եռոտ («բույր») — հոտ («սխառների խումբ»), վարել («վար անել, հերկել») — վարել («ղեկավարել»), փող («գրամ») — փող («սրինգ») — փող («վիզ») և այլն: Իսկ հարանունների դեպքում համադրվող բառերը, որոնք ընդհանրապես զույգերով են արտահայտվում, ձևով խստորեն մոտենում կամ նմանվում:

¹⁷ Այս դեպքում, հասկանալի է, հաշվի չեն առնվում ներհանդուրյալ (энантосемия) դեպքերը, հմտ., օրինակ, ձգել («նետել, գնն զցել») — ձգել («զեպի իրեն բաշել»), անգիմ («շատ թանկագին») — անգիմ («զին շունեցող առանց զնի, ձրի») և այլն:

բայց երբեք լիովին չեն համընկնում կամ նույնանում իրար: Այսպես՝ ձևով իրար մոտ կամ նման, բայց բոլորովին էլ նույնական չեն, ասենք, արհեստ-ը և արվեստ-ը, հանցանք-ը և զանցանք-ը, հասկացություն-ը և հասկացողություն-ը, կրկնություն-ը և կրկնողություն-ը, շառաշուն-ը և շառաշություն-ը, որովհետև դրանք հիմնականում նման լինելով՝ միաժամանակ ինչ-որ չափով (մի հնչյունով կամ «աննշան» մասնիկով) տարբերվում են իրարից: Նշանակում է՝ հարանունների, իբրև լեզվական-բառույթային միավորների, որոշման ու բացահայտման համար ամենից առաջ մեծ կարևորություն է ներկայացնում այն, թե ինչպե՞ս են ձևավորվում, ինչպիսի՞նք ձևային բանական կառուցվածք ունեն, ի՞նչ չափով են նման և ի՞նչ չափով են տարբեր նրանք իրարից: Իսկ դա անմիջականորեն առնչվում է հայերենի բառակազմության եղանակներին, մանավանդ՝ բառաբարդմանն ու ածանցմանը, որոնց միջոցով ու գործադրմամբ բազմահղար բառեր են կազմվել, որոնք միևնույն արմատը կամ միևնույն ածանցը ունենալու դեպքում առաջին հերթին հենց այդ չափով են ձևով նմանվում իրար. այսպես՝ գործաղույ, գործագուրկ, գործալիք, գործածելի, գործակալ, գործակից, գործավար, գործարան, գործարհ, գործարար, գործել, գործիչ, գործիք, գործնական, գործոն, գործողություն, գործունյա և այլն բառադրյալ բառերը ունենալով նույն գործ արմատը, անշուշտ, հենց դրա համապատասխան էլ ձևային ընդհանրություն են դրսևորում միմյանց նկատմամբ: Բայց սա, իհարկե, չի նշանակում, թե գործ արմատից կազմված բոլոր բառադրյալ բառերը անխտիր հարանուններ են. ամենևին: Տվյալ դեպքում հարանուն են հանդիսանում միայն իրենց ամբողջական կազմով իրար շատ մոտ կամ նման բառերը, ինչպես՝ գործառել—գործառնել, գործառական—գործառնական, գործառություն—գործառնություն, գործոն—գործոն, գործունություն—գործունեություն, որոնք կարող են նաև սխալաբար գործածվել միմյանց փոխարեն: Նմանապես, ասենք, զգալ (<զ+գալ) բայի ներկայումս արմատ բմբռնվող զգ բաղադրիչով կազմված բաղադրանակ բառերի մեջ հարանուններ կարող են համարվել զգալություն—զգալնություն, զգալական—զգալական, զգալարար—զգալնարար, զգալնություն—զգալունություն, զգացական—զգացողական, զգացում—զգացմունք՝ զույգերը՝ ամբողջական ձևով՝ արտաքին հնչյունական կազմով իրար շատ մոտ կամ նման լինելու պատճառով: Եվ կամ՝ սեր (<սէր) արմատով կազմված բաղադրությունների (օրինակ՝ սիրաբար, սիրաբանել, սիրահար, սիրային, սիրելի, սիրուն են) մեջ իրար կարող են զուգորդվել սիրալի||սիրալիք||սիրալից, սիրալիրություն||սիրալիրություն, սիրական||սիրեկան, սիրելիություն||սիրելություն զույգերը՝ դարձյալ նույն հիմունքով¹⁸: Այսքանից հետևում է, որ նույն արմատի կամ նույն ածանցի միջոցով հարանուններ են կազմվում բառերի՝ իրենց արտաքին հնչյունաչափ ամբողջական կազմով իրար նման կամ շատ մոտ լինելու դեպքում: Ասել է թե՛ ձևով երբեք նույնը չլինելով՝ նրանք միաժամանակ չպետք է խստորեն կամ զգալապես տարբերվեն իրարից: Եվ հետևաբար՝ սխալվում են նրանք, ովքեր, հարանուն են համարում, ասենք, հազվագյուտ-ը և հազվադեպ-ը, որ-ը և որպեսզի-ն, առաջադիմություն-ը և առաջընթաց-ը.

¹⁸ Այս և նախորդ զուգադիր բառերի և նրանց արտահայտած իմաստների համար հիմնականում տե՛ս Ստ. Մալխասյանցի Հայերեն բացատրական բառարանի I, II, IV և ՀՍՍՀ ԳԱ հրատարակած «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի» I, II հատորները:

առաջադեմ-ը և առաջադիմական-ը, գիտակից-ը և գիտակցական-ը, լավատես-ը և լավատեսական-ը, փառամոլ-ը և փառամոլական-ը, անգամ՝ կարիք-ը և բարիք-ը, վերաբերու-ն և վերմակ-ը¹⁹, որ իրենց արտաքին հնչյունական կազմով կամ ձևով շատ որոշակիորեն տարբերվելով իրարից՝ միաժամանակ նաև տարբեր իմաստներ են արտահայտում:

Այսպիսով, հարանունների որոշման առաջին ու կարևոր հիմունքը բանի հնչյունական ամբողջական կազմի կամ արտաքին ձևի նմանությունը կամ մերձությունն (շատ մոտ լինելն) է: Բայց սա, իհարկե, բնավ չի նշանակում, թե հնչյունական կազմով կամ ձևով իրար նման կամ շատ մոտ բաները բոլոր դեպքերում ու անխտիր հարանուն են լինում. ո՛չ: Ծխահեղձ («ծխից հեղձված՝ խեղդված») — ծխահեղգ («ծխով լցված, ծխալից»), սիրահույզ («սիրուց հուզված») — սիրահույս («սիրո հույս ներշնչող»), ծաղկել («ծաղիկներ արձակել») — ձաղկել («ծեծել»), մրիկ («բույսի հիվանդություն») — մրիկ («հողմ, փոթորիկ»), վարկ («պատիվ, հարգ») — վարք («կենցաղավարություն, վարվելակերպ») և բազմաթիվ այլ բառեր²⁰, օրինակ, արտաբուստ նման կամ շատ մոտ են, բայց հարանուններ չեն, որովհետև երբեք իմաստաբանորեն չեն կապվում ու հարաբերակցվում իրար:

Այստեղից էլ բխում է մյուս հետևությունը՝ այն, որ ձևային նմանությունից կամ մերձությունից բացի համադրվող բառերը պետք է անպայման իմաստով հարաբերակից լինեն կամ որոշակի իմաստային կապի ու հարաբերության մեջ գտնվեն միմյանց հետ: Դա էլ, բնականաբար, հարանունների որոշման երկրորդ կարևոր ու էական հիմունքն է, որը, թերևս, ավելի բարդ պատկեր է ներկայացնում, քան առաջինը: Բանն այն է, որ արտաքին հնչյունական կազմով կամ իրենց ձևով իրար նման կամ մոտ բառերը հարանուններ կազմելով՝ ոչ թե միատեսակ, այլ տարատեսակ, ավելի ձիշտ՝ տարատեսիճան իմաստներ ու իմաստային հարաբերություններ են արտահայտում: Իմաստային տեսակետից հարելով հոմանիշներին (հոմանիշներին ու նույնանիշներին)՝ հաբանունները նրանց նկատմամբ էրևան են հանում յուրատեսակ ընդհանրություններ ու տարբերություններ: Մի՞ հոմանիշների դեպքում համադրվող բառերը եթե նույն կամ մոտ իմաստներ են արտահայտում, ապա մյուս՝ հարանունների դեպքում նրանք թե՛ նույն, թե՛ մոտ, թե՛ տարբեր իմաստներ կարող են արտահայտել: Դրա համապատասխան էլ հարանունները ունենում են և՛ նույնանիշային ու հոմանիշային բառախմբեր, և՛ այնպիսի բառախմբեր, որոնցում զուգադրվող ձևերը տարբեր իմաստներ արտահայտելով՝ ինչ-ինչ թելերով իմաստային կապի ու հարաբերության մեջ են գտնվում:

Առաջին դեպքում էլ, սլարդ է, հարանունները և հոմանիշները համընկնում, իսկ երկրորդ դեպքում՝ ընդհակառակն, տարբերվում են միմյանցից²¹: Իսկ սա իր հերթին ցույց է տալիս, որ հոմանիշների համեմատությամբ հարանուններն, ամբողջությամբ առած, իմաստով ավելի հարուստ են և իրենց

19 Տե՛ս «Գրքերի աշխարհ» (1977, №№ 4, 6, 11, 1978, №№ 1, 3, 8, 10):

20 Օրինակները ներկայացված են սոսկ իրենց հիմնական նշանակությամբ:

21 Այսպիսով մենք չենք ընդունում այն տեսակետը, ըստ որի հարանունների համար հոմանիշությունը միանգամայն խորթ է համարվում:

դրսևորած իմաստային կապերի ու հարաբերությունների տեսակետից կարող են լինել:

ա) Այնպիսի հարանուններ, որոնք նույն բառի տարբերակներն են և, իրենց աշղպիսիք, եթե հնչյունական կազմով կամ արտաքին ձևով աննշանակով, ապա իմաստով բոլորովին չեն տարբերվում իրարից, ինչպես օրինակ՝ անձնանվեր—անձնվեր, աստղային—աստեղային, եղերերգ—ելերգ, զվարճալի—զվարճալից, բոշել—բոնել (*խսկց.*), բունալի—բունալից, ժպտալի—ժպտալիւր—ժպտալից, իմաստալի—իմաստալից, իմաստասեր—իմաստնասեր, լինելություն—լինելիություն, լսելության—լսելիություն, խնդալի—խոնդալից, կաշել—կպնել (*խսկց.*), հետևեցնել—հետևցնել, հոգնակերտ—հոգնակիակերտ, նանասարհ—համփա, մանրունք—մանրուք, մտովի—մտովին, մեքենաբար—մեքենայաբար, յոթամյակ—յոթնամյակ, յուրովի—յուրովին, որոտալի—որոտալիւր—որոտալից, պողպատ—պողպատ, սիրալիւր—սիրալից, սանատուական—սանատուական, տեսանելություն—տեսանելիություն, տաս—տասը—տասն, ցավել—ցավալ, ցավալի—ցավալից, ուրախալի—ուրախալից, փրփրալի—փրփրալիւր—փրփրալից, քաղաքացություն—քաղաքացիություն, օրերոց—օրերոց և այլն, և այլն:

Այս և նման ձևերը, որ առաջ են եկել բառերի բարեհնչյունության, գրարարյան ու ժողովրդախոսակցական իրողությունների զուգադրության, հնչյունական փոփոխությունների և այլ պատճառներով ու ուղիներով, հարանունների ամենասպարդ ու հասարակ տեսակն են:

Արտաքին հնչյունական կազմով առավել չափով նման կամ մոտ, նույն իմաստն արտահայտող աշղպիսի բառերը ազատորեն կարող են փոխարինվել մեկը մյուսով (*հմմտ. մտովի||մտովին վերհիշել անցյալը. որոտալի||որոտալիւր||որոտալից ծափահարություններ, սովորել տասերորդ||տասներորդ դասարանում ևն*): Բայց լեզուն որովհետև իրոք չի սիրում նույն գաղափարի կամ հասկացության համար միանման ձևեր գործածել, ապա միանգամայն օրինաչափորեն պայքար է ծավալվում դրանց միջև, որը սովորաբար ընթանում ու ավարտվում է կամ մեկի աստիճանական պարտությունը և մյուսի լիակատար հաղթանակով, կամ մեկի և մյուսի միջև իմաստային տարբերության (ներբերանգային իմաստի) ստեղծմամբ: Ըստ ուրում երբ իմաստային աշղպարներով շատ զգալի ու ցայտուն է դառնում, նրանք վեր են ածվում ինքնուրույն բառային միավորների և ավելի հեռանալով իրարից, ըմբռնվում—չիտակցվում իբրև առանձին կամ լիարժեք բառեր²²:

բ) Այնպիսի հարանուններ, որոնք ինքնուրույն ու անկախ բառեր են և արտաքին հնչյունական կազմով նման կամ շատ մոտ լինելով՝ նույն կամ իրար մոտ՝ մերձ իմաստներ են արտահայտում, ինչպես, օրինակ՝ արտաւոք—արցունք, արծաթա—արծաթե, բրդա—բրդե, երկաթա—երկաթե, փաշտա—փաշտե, ոսկա—ոսկե, խաբեություն—խաբերություն, խաբեական—խաբերական, խնայաբար—խնայողաբար, բեր—բերք, շուրք—շրք-

²² Որոշակի տարբերակում է նկատվում, օրինակ, բնությունություն—բնությունություն, մակարդկություն—մակարդկություն և այլն ձևերի միջև, որոնցից առաջինները ցույց են տալիս մի բանի ենթակա լինելու, իսկ մյուսները՝ կատարելի գործողության արդյունքն ու արդասիքը (*այդ մասին տե՛ս մեր «Հայերենի դերբայների բառակազմական արժեքը» հոդվածը. «Բանբեր նրկանի համալսարանի», 1977, № 1, էջ 157—158*):

քունք, դարձված—դարձվածք, ձեռ—ձեռք, ոտ—ոտք, աչ—աչք, շնորհ—շնորհք, ջնոր—ջնորք, կրկնություն—կրկնողություն, ջիլ—ջիղ, զով—հով, տարեմա—եում—տարեմանություն, արքուն—գարքուն, խնդիր—խնդրանք, խնայություն—խնայողություն *և այլն, և այլն*։

Այդպիսի հարանուններն էլ, ինչպես օրինակներն են ցույց տալիս, կամ նույնանիշներ (հմտ. արտասուք—արցունք, շուրք—շրքունք, ոսկե—ոսկյա են), կամ համանիշներ (հմտ. արքուն—գարքուն, ջիլ—ջիղ, խնդիր—խընդրանք են) են, որոնք համապատասխան դեպքերում և համապատասխան բառային կամ խոսքային դաշտում նույնպես կարող են փոխարինվել մեկը մյուսով (հմտ. դառն արտասուք||արցունք թափել, ոսկե||ոսկյա մատանի կրել, արքուն||գարքուն մնալ, խնդիր||խնդրանք ներկայացնել են)։

զ) Այնպիսի հարանուններ, որոնք նույնպես ինքնուրույն ու անկախ բառային միավորներ են և արտաքին ճնշյունական կազմով նման կամ մոտ լինելով՝ ոչ թե, սակայն, նույն կամ մոտ (մերձ), այլ ինչ-ինչ թելերով իրար հետ հարաբերակցվող իմաստներ են արտահայտում, ինչպես, օրինակ՝ արհեստ—արվեստ, բաժանում—բաժանմունք, բանվոր—բանավոր, գործուն—գործուն, գործունություն—գործունեություն, գիտական—գիտնական, դիմագրկել—դիմակագրկել, երկախոսություն—երկխոսություն, գանջանք—հանջանք, զննա—զննողական, կտրին—կտրիչ, կտրել—կտրել, կտրտել—կտրտել—կտրատել, կարկաչուն—կարկաչուն, հնչուն—հնչյուն, հասկացություն—հասկացողություն, հրաձիգ—հրձիգ, մտածություն—մտածողություն, նմանական—նմանողական, շառաշուն—շառաշուն, վաղորդան—վաղորդան, վերաբերել—վերաբերվել, ցուցում—ցուցմունք, ուսում—ուսմունք, փառհաս—փառհաս և այլն, և այլն։

Սրանք, ինչպես դժվար չէ նկատել, նույն արմատից ծագած կամ նույն արմատից կազմված առանձին բառեր են, որոնք նախորդ խմբի բառերից չգալի չափով տարբերվում են իրենց արտահայտած իմաստով։ Բ տարբերություն դրանց, որոնք նույնանիշային կամ հոմանիշային հարաբերության մեջ են գտնվում, այս վերջին տեսակի հարանունները սոսկ իրար աղերսակից կամ հարաբերակից իմաստներ են արտահայտում. այդ պատճառով նրանք երբեք չեն կարող փոխարինվել իրարով, և մեկի գործածությունը մյուսի փոխարեն բոլոր դեպքերում սխալ է ու մերժելի։ Այսպես, օրինակ, իրար հարաբերակից և միաժամանակ տարբեր իմաստներ են արտահայտում, արհեստ-ը և արվեստ-ը, գործունություն-ը և գործունեություն-ը, գանջանք-ը և հանջանք-ը, կտրին-ը և կտրիչ-ը, հասկացություն-ը և հասկացողություն-ը, վերաբերել-ը և վերաբերվել-ը, ցուցում-ը և ցուցմունք-ը և այլն, որովհետև, ասենք, արհեստ-ը ձեռական, իսկ արվեստ-ը՝ մտավոր արվեստ է նշանակում, գործունություն-ը նշանակում է «գործուն լինել», իսկ գործունեություն-ը՝ «որևէ բնագավառում տեղական աշխատանք կատարելը», հասկացություն-ը (понятие) նշանակում է «ստորաբանորեն մասնատված դադարի, որ արտահայտում է իրականության առարկաների և երևույթների ընդհանուր և էական հատկանիշները», իսկ հասկացողություն-ը՝ «հասկանալու՝ բացահայտելու կարողություն»։ վերաբերել-ը նշանակում է «հատկություն՝ կապ՝ առնչություն ունենալ մի բանի», իսկ վերաբերվել-ը՝ «որոշակի վերաբերմունք՝ մոտեցում ցուցաբերել մեկի կամ մի բանի նկատմամբ», ցուցում-ը՝ նշանա-

կում է «վարվելու՝ գործելու հրահանգ՝ առաջադրանք՝ պատվեր», իսկ ցուցմունք-ը՝ դատարանում տրված վկայություն» և այլն, և այլն²³:

Բայց կան նաև հարանուններ, որոնք բազմազան իմաստներ արտահայտելով՝ որոշ դեպքերում համընկնում, իսկ որոշ դեպքերում, ընդհակառակն, ստացվում-բաժանվում են իրարից. իմաստապես համընկնելու դեպքում նրանք կազմում են նույնանիշային կամ համանիշային շարքեր և, բնականաբար, կարող են փոխարինվել միմյանցով, իսկ չհամընկնելու դեպքում՝ բմբռնվում են իբրև տարիմաստ բառեր և չեն կարող գործածվել միմյանց փոխարեն: Դասել և դարսել հարանուններն, օրինակ, միևնույն՝ «իրար վրա շարել՝ դասավորել՝ դասել» իմաստով համընկնում, իսկ «որևէ դասում դնել, որևէ դասում՝ շարքում թվել» իմաստով, որ հատուկ է միայն առաջին՝ դասել ձևին, հիմնավորապես տարբերվում են իրարից: Նմանապես՝ համարել և համարել հարանունները միևնույն՝ «թվել, հաշվել, թվարկել» իմաստով եթե համընկնում-համապատասխանում են իրար (հմտ. օրինակ, «կապտավուն սաքերն այնքան մոտ, այնքան պարզ էին երևում, որ հեռվից կարելի էր համարել նրանց մաքուր լանջերի բոլոր ձորակները...», Ակսել Բակունց), ապա «կարծել, ենթադրել, գտնել, ընդունել» իմաստով տարբերվում են և այդ դեպքում չեն կարող փոխարինվել իրարով: Եվ կամ՝ հավասար և հավասար հարանուն բառերը միշտ նույն իմաստներն²⁴ արտահայտելով՝ իրարից տարբերվում են միայն երկրորդին հատուկ «հավասարությունը պահելու համար զինվորական կամ սպորտային շարքերում կանգնածներին տրված հրահանգ» (հականիշը՝ զգաստ—смирно) նշանակությամբ:

Այդպես նաև միատեսակ ու տարբեր իմաստներ են արտահայտում եռալ—գեռալ, զգացում—զգացմունք, կազմակերպական (организационный)—կազմակերպչական (организаторский), իմաստություն—իմաստնություն, պահածո—պահածու և բազմաթիվ ու բազմաթիվ բառեր, որոնք ժամանակի ընթացքում փոփոխություններ կրելով՝ իմաստային-իմաստաբանական տեղաշարժեր են առաջ բերել հիշյալ ղույգների միջև: Սերելով կամ կազմվելով նույն արմատից՝ հարանուն բառերը, ուրեմն, կարող են և իմաստային տարբերակման կամ ճշուղավորման ենթարկվել, և իմաստապես ավելի կամ նվազ չափով հեռանալ իրարից: Ըստ որում, պատահում է անգամ այնպես, որ հարանունների միջև խզվում է իմաստաբանական կապն ու հարաբերությունը, և նրանք այլևս չեն բմբռնվում ու գիտակցվում իբրև այդպիսիք: Նախապես հարանուններ են եղել, օրինակ, հունական ծագում ունեցող կաղապար (καταπεριγραφή «ոտքի փայտյա կաղապար») բառը և դրա կրկնակը՝ գաղափար-ը, որոնք անցյալում հավասարապես նշանակել են «նախատիպ, կաղապար, օրինակ, պատկեր»: հմտ. նաև գաղափարել «օրինակել, նմանեցնել, ձևացնել», գաղափարություն «օրինակ, նմանություն» և այլն²⁵: Հետագայում, սակայն, դրանք իմաստապես այնքան են տարբերակվել, որ «արդի գրականում վանազանում

23 Բերված օրինակների իմաստների համար տե՛ս Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան (I—IV հատորներ), «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան» (I—III հատորներ) և այլն:

24 Տե՛ս նշված բառարանները:

25 Տե՛ս Շր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. Բ, Երևան, 1973, էջ 494:

են գաղափար (երբեմն գրված գաղափար՝ արևմտյան հայոց մեջ) «միտք, խորհուրդ, կարծիք» և կաղապար «նախատիպ, օրինակ, մոդել կամ ղալիբ»²⁶։ Իմաստային այդպիսի տարբերակմամբ էլ գաղափար և կաղապար բառերը այլևս չեն ըմբռնվում իբրև հարանուններ և, հասկանալի է, իրար հետ շփոթվելու որևէ «վտանգ» չեն ներկայացնում։ Վերցնենք մի այլ օրինակ. տակավին անստույգ արվեստ (<արուեստ) բառը և նրա հետնաբար ավանդված արհեստ ձևը²⁷ անցյալում նույնպես միատեսակ նշանակություններն են («1. արհեստ, ճարտարություն, 2. հնարագիտություն, 3. ճարտարությամբ շինված բան, 4. հրաշք, սքանչելիք, 5. խաբեբայություն, կեղծիք, 6. հրեշ, 7. ճարտարվեստ գործ») են արտահայտել, բայց դրանք ևս հետագայում իմաստային փոփոխության են ենթարկվել։ «Նոր գրականում տարբերվում են արվեստ «մտավոր արվեստ, art» և արհեստ «ձեռական արվեստ», métier» բառերն իրարից²⁸, թեև նրանց միջև իմաստային կապն ու հարաբերությունը ամենևին չի վերացել, և թիչ չի պատահում, որ ոմանք մեկը շփոթում են հենց մյուսի հետ։ Ժամանակի ընթացքում իմաստային զգալի փոփոխություններ են կրել նաև հոգի և ոգի բառերը, որոնք նույն արմատի երկու տարբեր ձևերն են և սերելով *posuio* < *peu* «փչել, շնչել» արմատից՝ նշանակել են բուն «փչյուն, շունչ»²⁹։ «Նախնական մարդու համար,— գրում է Աճառյանը — «հոգի, քամի, շունչ, օդ, փչյուն» միևնույն գաղափարներն էին. հմմտ. Մն. բ. 7. «Եւ ստեղծ Տէր Աստուած զմարդն հող յերկրէ և փչեազ յերևսս եորա շունչ կենդանի և իղև մարդն յոգի կենդանի»³⁰։ Բայց դրանք ևս աստիճանաբար սկսել են իմաստապես տարբերակվել և ըստ Աճառյանի՝ «Արդի գրականը զանազանություն դրնելով երկու ձևերի միջև, գործածում է հոգի „ame, Seele“ նշանակությամբ, իսկ ոգի «հոգեկան զորություն, ուժ, եռանդ. 2. ցնդական որևէ նյութ, իսկություն»³¹։ Հստ որում, պետք է ասել, որ իմաստային տարբերակման հիման վրա հոգի բառը հետզհետե ավելի է ընդարձակել իր իմաստները, իսկ ոգի-ն, ընդհակառակն, սահմանափակել է դրանք³² և այսօր գերազանցապես գործ է ածվում «որևէ բանի էությունը, ներքին բովանդակությունը, բնորոշ հատկությունը», «ներշնչում, ոգևորություն, հռանդ», այլև «իբրև թե բոլոր երևույթների ու իրերի հիմքում ընկած ոչ նյութական սկիզբը» (հմմտ. բացարձակ ոգի) իմաստներով։

Այսպիսով՝ բերված օրինակներն իսկ ցույց են տալիս, որ հարանունները արտաքին հնչյունական կազմով իրար նման կամ շատ մոտ լինելով՝ իսկապես տարաստիճան իմաստներ ու հարաբերություններ են արտահայտում

26 Նույն տեղում, հատ. Ա, Երևան, 1971, էջ 504։

27 Իմաստից ու ձևից ելնելով՝ կարծում ենք, որ արուեստ||արհեստ բառը բաղադրյալ բառ է (հմմտ. պահեստ < պահ + էստ, գովեստ < գով + էստ, ուտեստ < ուտ + էստ) և ամենայն հավանականությամբ ծագում է առնել (ժանել, գործել, կատարել, ստեղծել, վերածել, շինել) բայի արար («շինվածք») արմատից. հմմտ. նաև արարած «շինած բան, գործ, շինվածք», «ստեղծագործություն», «ստեղծված էակ» (տե՛ս Հ. ր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. Ա, էջ 261)։

28 Տե՛ս նույն տեղում, էջ 332։

29 Տե՛ս նույն տեղում, հատ. Գ, էջ 107։

30 Նույն տեղում։

31 Նույն տեղում։

32 Տե՛ս հատկապես Ս. Ս. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հատ. III, էջ 123 և 551—552։

և իմաստային նույնությունից կարող են մինչև իսկ անհամատեղելության հասնել (հմտ. պարապել—պարպել, վերացուցանել > վերացնել || վերցնել, հուզել—ուզել): Իմաստային աստիճանավորումները կամ տարբեր իմաստներն էլ պայմանավորվում են նաև հարանունների ձևաբանական կառուցվածքով և նրանց միջև դրսևորվող ձևային տարբերություններով, որոնք հիմնականում լինում են երկու տեսակ՝ հիշյալունական և բառակազմական: Հնչյունական իրողությունները սովորաբար առաջ են բերում բառային տարբերակներ բառաձևեր (հմտ. հետևեցնել || հետևցնել, մակարդել || մակարդելություն...) և կրկնակ բառեր (հմտ. հավասար—հավսար, կոտորել—կոտրել, չիլ—չիլ...), իսկ բառակազմականը՝ բացառապես ինքնորոշ բառային-բառույթային միավորներ (հմտ. եռալ—գեռալ, զգացում—զգացմունք, հասկացություն—հասկացողություն, կազմակերպական—կազմակերպչական, կարկաչուն—կարկաչյուն ևն): Այս դեպքում էլ, հասկանալի է, կարևոր դեր են կատարում հատկապես բառակազմական-բառաստեղծական ձևույթները՝ ածանցները, որոնք իրենց հերթին նույնպես իրար նման ու շատ մոտ են լինում (հմտ. գործուն—գործուն, կտրիչ—կտրին, կարկաչուն—կարկաչյուն, դարձված—դարձվածք, վաղորդայն—վաղորդյալ և այլն) կամ հանդես գալով զուգորդվող ձևերից միայն մեկում՝ առանձնապես մեծ տարբերություն առաջ չեն բերում (հմտ. գործունություն—գործունեություն, հասարակություն—հասարակայնություն, մտածություն—մտածողություն, լուսավորական—լուսավորչական, զգայություն—զգայնություն, գիտական—գիտնական, այլև՝ արթուն—զարթուն, եռուն—զեռուն ևն): Բայց այդուհանդերձ «ամենաանշան» ածանցներն անգամ որոշակի իմաստ են արտահայտում և սահմանադատում համապատասխան հարանուններն իրարից: Այդ տեսակետից բավական ուշագրավ են, օրինակ, գրաբարյան «ումն» ածանցով բայանունների եղակիի և հոգնակիի երբեմնի ձևերը՝ հմտ. բաժանում(ն)—բաժանմունք, բերում—բերմունք, զգացում—զգացմունք, համարում—համարմունք, հուզում—հուզմունք, հարցում—հարցմունք, մտածում—մտածմունք, շարժում—շարժմունք, ուսում—ուսմունք, ցուցում—ցուցմունք և այլն, որոնցից առաջինները Մ. Աբեղյանի բնորոշմամբ «ցույց են տալիս ավելի գործողություն», իսկ մյուսները «ունեն ավելի վերացական դրույթյան կամ որևէ ուրիշ կողմնակի նշանակություն ևս»³⁵:

Այսպիսով, միանգամայն պարզ է, որ հարանունները իսկապես ձևով նման կամ շատ մոտ, իսկ իմաստով իրար հետ տարաստիճան չափով կապված կամ հարաբերակից նույնարմատ բառեր են և բնորոշվում են ձևի և բովանդակության առանձնահատուկ բնույթով ու հարաբերությամբ: Նրանք դրան համապատասխան էլ սովորաբար նույն խոսքամասային իմաստն են արտահայտում և հատկանշվում նույն քերականական կարգերով ու իրողություններով: Բայց պետք է ասել, որ դա ամենևին էլ բացարձակ օրենք չէ. հայերենում, ինչպես փաստերն են ցույց տալիս, կան նաև հարանուններ, որոնք ձևով մոտ կամ նման, իսկ իմաստով հարաբերակից լինելով՝ ոչ թե նույն, այլ տարբեր խոսքի մասերի (ածական և գոյական, գոյական և մակբայ) են պատկանում, հմտ. օրինակ՝ դողդոջուն («դողդոջացող») — դողդոջյուն («դողդոջանք. դողդոջալը»), կարկաչուն («կարկաչող») — կարկաչյուն («կարկաչ՝ խոխոջ՝ կարկաչելը»), խոխոջուն («խոխոջացող») — խոխոջյուն («խոխոջ՝ խոխո-

35 Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 162:

ջալը»), հնչուն («հնչող՝ հնչեղ») — հնչյուն («հնչող ձայն»), վաղորդայն («վաղ առավոտը») — վաղորդյան («ստալոտյան, առավոտվա»), այլև՝ առաջի («մեր տան առաջի պարտեզը») — առաջին («առաջին դասարանի աշակերտ») և այլն:

Պատկանելով հանդերձ տարբեր խոսքի մասերի, դրանք նույնպես համարմատ (նույնարմատ) բոլոր են և ոչ միայն ձևով, այլև իմաստով կամ իմաստաբանորեն են իրար մոտ կամ նման:

Այստեղից էլ հետևում է, որ հարանունները բոլոր դեպքերում ձևով՝ արտաքին հնչյունական կաղմով, իրար նման կամ մոտ լինելուց բացի պետք է անպայման ունենան որոշակի իմաստային ընդհանրություն և հարաբերակցություն: Այլ կերպ ասած՝ ձևի և բովանդակության փոխհարաբերակցված ընդհանրությունն է միայն պայմանավորում հարանունների գոյությունը: Եվ հետևաբար՝ եթե դա բացակայում է, ապա սոսկ ձևով մոտ կամ նման, իսկ իմաստով միանգամայն տարբեր (անհարաբերակից) կամ իմաստով մոտ ու հարաբերակից, իսկ ձևով տարբեր բառերը երբեք չեն կարող հարանուններ լինել: Ինչպես այլ լեզուներում, այնպես էլ հայերենում կան սոսկ արտաքին հնչյունական կաղմով՝ ձևով, մոտ կամ նման, իսկ իմաստով միանգամայն տարբեր բաղմամբիվ բառեր, որոնք նաև տարբեր ծագում ունենալով՝ երբեք էլ հարանուններ չեն, հմմտ. օրինակ՝ ամուլ — ամուլ, դեպք — դեմք, թոշել — քոշել, թվատ — քվատ, թորովել — քորովել, պահակ — պահակ («պարտադիր աշխատանք»), աշխարհ — աշխար («լաց ու կոծ, ողբ»), պահել («փոքրիկ դինված չոկատ») — պահիկ («առասպելական ոգի») — պահիկ («կեղծամ»), սպրդել («վրիպել») — սփրքել («դժգունել») ..., այլև՝ դեդուկտիվ (ДЕДУКТИВ «արտածական») — դեդեկտիվ (ДЕТЕКТИВ «խուզարկու»), կոմպոնենտ (КОМПОНЕНТ «բաղադրամաս») — կոմպետենտ (КОМПЕТЕНТ «ձեռնհաս, կարող»), կոմպակտ (КОМПАКТНЫЙ «հավաք, խիտ, հոծ») — կոնտակտ (КОНТАКТ) և այլն:

Ուստի լեզվաբաններից ոմանք (Ն. Պ. Կոլեսնիկով, Ա. Ա. Եվգրաֆովա ևն), ինչպես արդեն նշել ենք, նման բառերը ևս հարանուններ են համարում, տարբերություն չդնելով համարմատ և տարարմատ ձևերի միջև, իսկ ոմանք (Օ. Ն. Վիշնյակովա, Մ. Ի. Ֆոմինա), ընդհակառակն, դրանք առանձնացնում են իրարից և այն բառերը, որոնք սոսկ արտաքին հնչյունական կաղմով կամ ձևով են մոտ կամ նման իրար, համարում են պարոնիմասիա (паронимасия) կամ պարոնիմազիա (паронимазия < παρωνυμασία — «հար, կից» + «անվանում եմ»)³⁴, որը մենք «հարանվանում» ենք թարգմանում:

Հարանվանումները, ուրեմն, իմաստով անհարաբերակից, իսկ ձևով իրար մոտ կամ նման բառերն են, որոնք միայն մի կողմով՝ արտաքին ձևով են համընկնում հարանուններին և այդ հիման վրա, հատկապես զրավոր խոսքում, երբեմն նաև շփոթվում իրար հետ:

Իայց կան նաև բառեր, որոնք միջին տեղ են բռնում հարանունների ու հարանվանումների միջև. հմմտ., օրինակ, անձնագիր — անցագիր, անձնագրալին — անցագրալին, հնարան — հնէարան, գործավառ — գործավոր, գործավարություն — գործավորություն, բացօդյա — բացօրյա, դատավոր — դատավար, դատավարություն — դատավորություն, գգածվել — գգացվել, հավվադեպ — հազվագյուտ, հետագա — ապագա, խառնել — խառնակել, նշտել — հշգրտել, մեկ-

³⁴ Տե՛ս, օրինակ, Օ. В. Вишнякова, Паронимы в русском языке, էջ 38—134; М. И. Фомина, Лексика современного русского языка, էջ 63—65:

նել—մեկնաբանել, պարզել—պարզաբանել, պահպանել—պաշտպանել, պահ-
պահություն—պաշտպանություն, պատրաստակամություն—պատրաստակաճու-
րում, սրդող—սրտդող, վինել—վինարկել, տարբերել—տարբերակել, փոր-
ծել—փորձարկել, ֆննել—ֆննարկել և այլն, և այլն:

Նման բառերն էլ, սակայն, ճիշտ միատեսակ պատկեր չեն ներկայացնում,
Այդտեղ առաջին՝ կան բառեր, որոնք նույն արմատից բացի իրենց կազմում
ունեն նաև ձևով մոտ, իմաստով տարբեր (հմմտ. անձնագիր—անցագիր, դա-
տավարություն—դատավորություն, բացօդյա—բացօրյա, սրդող—սրտդող ևն)
կամ, ընդհակառակն, իմաստով մոտ, ձևով շատ տարբեր (հմմտ. ապագա—
ենտագա, հազվադեպ—հազվագյուտ ևն) բաղադրիչներ, որ նույնպես նրանց
շփոթության պատճառ են դառնում: Երկրորդ՝ կան բառեր, որոնցից մեկը
մյուսի՝ որևէ արմատով կամ ածանցով գերաճած ձևն է հանդիսանում, հմմտ.
օրինակ՝ պահել—պահպանել, խառնել—խառնակել, մեկնել—մեկնաբանել,
պարզել—պարզաբանել, սիրել—սիրաբանել, վինել—վինարկել, ֆննել—ֆն-
նարկել, փործել—փորձարկել և այլն:

Դժվար չէ նկատել, որ դրանք արտաքին հնչյունական կազմով իրարից
զգալապես տարբերվող բառեր են, որոնք իմաստով, սակայն, մի կող-
մից եթե մերձենում և որոշ դեպքերում անգամ նույնանում են, ապա
մյուս կողմից՝ ուղղակի իմաստային տարբերություններ են երևան հասնում
միմյանց նկատմամբ: Մեկնել—մեկնաբանել, պարզել—պարզաբանել, վի-
նել—վինարկել գույգերի մեջ, օրինակ, եթե առաջինները (մեկնել, պար-
զել, վինել) տարբեր իմաստներ արտահայտելով՝ նշանակում են նաև «մուխ
բանը պարզել՝ բացատրել», «մի բան պարզ՝ հասկանալի դարձնել», «վեճ վա-
րել՝ հակաճառել», ապա երկրորդները (մեկնաբանել, պարզաբանել, վիճա-
բանել) բացառապես և այն էլ՝ շատ որոշ, հենց այդ իմաստներն են արտա-
այտում. այդպես նաև ֆննել—ֆննարկել, վինել—վինարկել, փործել—փոր-
ձարկել բառերը իմաստապես իրարից տարբերվում են նրանով, որ առա-
ջինները ուղղակիորեն ֆննելու, վինելու, փործելու, իսկ երկրորդները՝
արկ բաղադրիչի շնորհիվ՝ քննության առնելու, վեճի առարկա դարձնելու,
փորձով ստուգելու իմաստն են արտահայտում: Նմանապես, ասենք, խառ-
նել—խառնակել, նշտել—նշգրտել՝ ձևով իստոբեն տարբերվող բառերն էլ
իմաստապես իրարից տարբերվում են նրանով, որ առաջինները՝ եթե աճելի
մեղմ, ապա երկրորդները սաստկական ու ավելի նպատակամղված գործողու-
թյուն են ցույց տալիս:

Վերջապես՝ այնտեղ կան նաև բառեր, որոնք միանգամայն տարբեր ծա-
գում ունենալով՝ իրար հարում-հարաբերակցվում են իրենց թե՛ ձևով և թե՛
իմաստով, հմմտ. օրինակ՝ զգածվել (պարտություն, համակվել, լցվել մի տպա-
վորությամբ՝ զգացմունքով) — զգացվել (զգացումներով համակվել, հուզ-
վել, ազդվել), որոնցից առաջինը ծագում է զգածիլ (հագնել) բայից և նշա-
նակում է «հուզվել, համակվել», իսկ երկրորդը զգալ բայի կրավորականն է՝
զգացվել, որ արևելահայ գրական լեզուն շփոթելով իրար հետ (իմաստի մեր-
ձավորության պատճառով), գործածում է միայն զգացվիլ «զգալի լինել»
2. հզածուիլ»³: Ավելորդ չէ ասել, որ նման շփոթի դեմ էլ ժամանակին առիթ
է ունեցել բողոքելու բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանը, ասելով. «Մեր

³⁵ 2ր. Աճառյան, Հայերեն տրամաական բառարան, հատ. Բ. էջ 87:

պարբերական թերթերում ես շատ քիչ բան եմ գրել վերջին տարիները, բայց և այնպես առիթ ունեցել եմ «զգածվել» բայլը գործածելու, և միշտ էլ իմ ծնորբագրողների ձեռքին ց է դարձել:

Թույլ տվեք այժմ հայտնել, նախ որ ես տառասխալ անողներից չեմ, և զուտ նեղույթյուն եմ քաշում սրբագրողները, եթե գրածներիս մեջ տառասխալներ են ուղում գտնել. և երկրորդ՝ որ «զգածվել, զգածված» ձևերը «զղալ» բառից չեն, այլ «զգածիլ»³⁶:

Մի այլ օրինակ. պահպանել/պահպան (<պահլ. pahr + դռնդ. pān) — պաշտպան (<պահլ. paštran)³⁷, պահպանել — պաշտպանել, պահպանություն — պաշտպանություն, պահպանական — պաշտպանական, պահպանողական — պաշտպանողական և այլն զուգահեռ բառերը տարբեր ծագում ունենալով՝ ձևով իրոր բավական նման են, իսկ իմաստով հարաբերակցվելով՝ իրարից միաժամանակ տարբերվում են նրանով, որ Կոնստանտինի մի բան ներդրումն ապահովում էր, իսկ երկրորդները այն դրսի կամ արտաքին հարձակումներից զերծ պահելու՝ պաշտպանելու նշանակությունն են արտահայտում (հմտ., օրինակ, պահպանել ունեցվածքը — պաշտպանել ունեցվածքը, պահպանել երեխաներին — պաշտպանել երեխաներին և այլն):

Ձեռյին ընդհանրությունից դատ ավելի կամ նվազ չափով իրար առնչվելով նաև իմաստով՝ այս կարգի բառերը մոտենում են բուն հարանուններին և ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր խոսքում ավելի շատ են միմյանց հետ շփոթվում, քան ձևով մոտ կամ նման, իսկ իմաստով տարբեր կամ անհարաբերակից բառերը: Այդ հիմամբ էլ նրանք կարող են կոչվել անխակական հարանուններ և դիտվել իբրև հարանվան մի ենթատեսակ՝ ի տարբերություն հարանվանումների (պարոնոմասիաների), որոնք, ինչպես լեզվաբանները և հատկապես՝ ռուսագետներն են նշում, ռուսական որոշակի դեր են կատարում լեզուներում: Հարանվանումները գործ են ածվում մանավանդ բառաստեղծում (կայմբուրներում), ասացվածքներում, առածներում, խոսքը դարձնելով ավելի դիպուկ ու արտահայտիչ, ազդեցիկ ու տպավորիչ, հմտ., օրինակ, աննաբ—հաննաբ, աննաբը կերել է րանչաբ, չաբիբ—բաբիբ («Չկա չաբիբ առանց բաբիբի»), կցված—կծված, անուր (||անումբ) կա, ամանումբ չկա, ժամավնաբ—ժամավնառ, գողություն—քողություն («գողությունը չունի թողություն»), ան—մահ («երկու ահը մի մահ է»)..., այլև՝ либо пак, либо пропа; либо полковник, либо покойник; моя пьеса не то фарс, не то фарш; он не глук, а глук; муж по дрова, жена со двора և այլն:

Հարանուններին և դրանց առնչակից իրություններին վերաբերող հարցերը անշուշտ այս ամենով չեն սպառվում. բայց անկախ դրանից, կարծում ենք, կատարված քննության մի պարզ է դառնում, որ՝ ա. հարանունները յուրահատուկ ձևաիմաստային կառուցվածք ունեցող բառային միավորներ են և բառերի՝ ըստ ձևի (հնչյունական կազմի, հնչյունական ձևավորման) և իմաստի (բովանդակության, արտահայտած նշանակության) կատարվող դասակարգումների (տարաբաժանումների) մեջ իրենց ուրույն տեղն ունեն. բ. իբրև ձևով իրար մոտ կամ նման, իսկ իմաստով տարաստիճան չափով հարաբե-

³⁶ Հո վ ի. Հո վ ի աննիսյան, Երեբ, Երեան, 1959, էջ 364:

³⁷ Տե՛ս Հր. Ահառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. Ե, Երեան, 1930, էջ 797, 811:

րակից բառեր, նրանք բնորոշ են նաև հայերենին և ինչպես այլուր, այնպես էլ այդտեղ ազգային ինքնատիպ բնույթ են կրում. գ. նրանց ուսումնասիրությունը ունի ոչ սիայն գործնական, այլև տեսական նշանակություն, և այդ ուղղությամբ կատարվող աշխատանքները գիտական կարևորություն են ներկայացնում հատկապես իմաստաբանության ու ռեաբանության համար:

ПАРОНИМЫ В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Доктор филол. наук А. С. МАРКАРЯН

(Резюме)

Исследование паронимов в армянском языке еще не проводилось. Мы считаем паронимами только близкие по звучанию однокоренные слова, которые одновременно в той или иной степени соотносительны друг с другом и по своему значению. В статье рассматриваются сущность и разновидности паронимов, а также явления паронимазии. На основе анализа конкретных примеров из армянского языка можно заключить, что: а) паронимы—это лексические единицы, имеющие особую формально-смысловую структуру и занимающие самостоятельное место в классификации слов по форме (т. е. по звучанию) и по содержанию (т. е. по значению); б) это близкие по форме и в различной степени по содержанию соотносительные друг с другом слова, характеризующиеся свойственными данному языку особенностями и национальными чертами; в) изучение паронимов и парониматических явлений имеет не только практическое, но и теоретическое значение. Их дальнейшее исследование может быть полезным как для лексикологии, так и для семасиологии и стилистики в частности.